

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 օկենդ

ԿԱՆԽԻԿ

ՊԵՏԱՆԿ

Գրութիւնքեւ
չեն տրուիր

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ

ՀՈԿՏ. 13 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 227

ՄՈՒՀԱՔԵՄԷ

Գարիյնը քերամըն տէրխաթըր խտէճէի վէճէ իւզրէ. Կարապետ Յակոբեան նամ պիր քիմսէ 212 նումէրօլու նիւսիսէմիդաէ նէշր օլունան պիր պէնտի կիւեա քէնտիսի իշլուն եազըլմըշ տըր զաննըլլա իւզէրիմիզէ հիւճիւմիէ քիւֆը ու հաղարէթ իթմիշ օլտուզունտան մէրգումուն ալէյ-հինէ իգամէի տալա իթմիշ իտիք:

Տիւնքիւ ճուճաա կիւնիւ իճրա օլունան մուհաքէմէտէ մէրգումուն իշպու նապէճա հարաքէթի շահիտ վասըթասըլլա տալի իսպաթ օլունտուգտան սօնրա մահքէմէ մէրգում Կարապետի 15 կիւն մահպուսիթլէ 25 ֆր. ճէզայի նազտիլէյէ հիւքմ իթմիշտիր:

ԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

ՓԵՆԿՈՒՄ—ԲԱՑՈՒՄ

Երկուշաբթի օրը Վառնայի ազգային երկսեռ վարժարանները փակուեցան՝ ուսուցիչներուն ամսականները չվճարուելուն պատճառաւ:

Զորքշաբթի օրը Վառնայի ազգային երկսեռ վարժարանները վերաբացուեցան՝ ուսուցիչներուն ամսականները վճարուելուն պատճառաւ:

Բոժ. —Նայինք քանի՞ անգամ պիտի կըրկնուի մինչև սեպտեմբեր սա Փակում—Բացումի քանոնաւան: Առ այժմ կըսենք. մէկ:

—Ուուման՝ ոչ Կալաց քաղաքի բնակիչներէն Սիման Քէնէտեան և Ղուկաս Պապաեան անուն ազգայինք իրարու դէմ ունեցած ստեղծութիւնին յաղեցնելու համար մէյմէյ քահանայ ձեռքերին առած (Ղեւոնդ և Տաճատ) անոնցմով սկսած են իրարու գլխու զարնել. տեսնենք որո՞նք պիտի շահախի:

—Սիլիսդէի ազգ. վարժարանաց մեղուաջան Հոգաբարձութիւնը Յունիս, Յուլիս, Օգոստ. և Սեպտ. ամսաց մէջ շատ զբաղեալ ըլլալուն պատճառաւ: չկրնալով լաւ ընտրութիւն մը ընել, Հոկտեմբերի մէջ ուսուցիչ փնտռելու ելած է, այն միջոցին երբ քիչ շատ կարող ուսուցիչները պաշտօնի վրայ ըլլալով, հրապարակին մէջ կը գտնուին մէկ քանի ծանուցեալ մակաբոյժներ և թափթփու քններ:

—«Վէսէլօ» խմբէն դէթ շաբաթը անգամ մը լուրջ թատերախաղեր պահանջող կարգ մը թատերասէրներ (?) սկսած են նոյն կարգի գեղեցիկ խաղեր տրուած հինգշաբթի գիշերները փայլիլ իրենց . . . բացակայութեամբը:

—Բարիւն Հայ եկեղեցիին շինութիւնը, որուն հողը արդէն գնուած է, գարնան պիտի ըսկսի. Բարիւն Օրէրա թատրոնը շինող Կարնիէ ճարտարապետը և իր որդին պիտի կառուցանեն զայն, խորհրդակցութեամբ արեւելեան ճարտարապետութեան ծանօթ Տ. Սեփոն Պէշիրճեանի:

—Ատանայէն կը գրեն թէ հոգաբարձները այս տարի յուսախաբ եղած են, ցորեն, գարի, վարսակ ևլն. անձրեւի ձանձրացուցիչ չարունակութենէն գրեթէ ոչնչայեր են: 5000 այգեպաններ գրեթէ կէսը կորսնցուցեր են իրենց ունեցածին: Վասն զի զով և անձերոտ օգերու յաջորդող կիզիչ և տապկոյ օդը բնաջինջ ու թերխաշ ըրեր է խաղողները:

ՍԵՐ ԴԱՏԸ

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողաց, թուականէս երեք ամիս առաջ, թերթիս 213րդ թիւին մէջ երեցած հին ժամանակի վերաբերեալ զաւելտական յօդուածի մը պարունակութիւնը իրեն վերագրելով, Կարապետ Յակոբեան ըստած անձը չուկային մէջ մեր վրայ յարձակած էր մոլեգնօրէն և կատաղութեան հասնող բիրտ թափով մը՝ մարդկային ամենատարրական պարտականութեանց հակառակ ծայրայեղութիւններու դիմած էր անպարկեշտ լեզուով:

Զինք՝ արդարութեան յանձնած էինք իր ժամանակին:

Երէկ, ուրբաթ, դատը տեսնուեցաւ և որախ ենք յայտարարելու թէ դատարանը մոտիկ ընելէ յետո՛ւ մեր վկան, յետ թեր ու դէմ վիճաբանութեանց դատապարտեց յիշեալ Կարապետ Յակոբեանը 15 օր քանտարկութեան եւ 25 ժր. տուգանքի:

Այս տողերու մէջ, Պուլկար Դատարանին արդարասիրութեան արձագանքը տալով, նպատակ չունինք երբէք անձնական յաղթանակի մը թափնին հրովը հրճուիլ. ատիկա պարզապէս պիտի ըլլար եսասիրական քինախնդրութեան մը փոխացումին գռեհիկ հրճուանքը, որուն սահմանուած չեն բարեբաղդաբար մեր սիւնակները: Տեսակէտը՝ ուրկէ միւլած խնդութեամբ կ'արձանագրենք հոս բիրտ ուժին կրած այս ձախողանքը, շատ վեր է անձնական ու և է թելագորութենէ:

«Կը ծեծեմ և կամ կ'սպաննեմ» ներու սի-

կարեան մօտան է, որ շունգալից ապտակ մը կ'ուտէ արդարութեան ձեռքէն յանձին մեր հակառակորդին, որ եթէ իր ընկերներուն մէջ ամենէն դժբաղդն եղաւ իբր դատապարտուած մէկը, գոնէ սա միջթարութիւնը կրնայ ունենալ, որ ինք այսպէսով օրինակ կը ըլլայ իր պատկանած դասակարգին և անոր զգաստութեանը սատարող կարեոր ազդակներէն ալ մէկը: Եւ արդէն ընկերութիւնը իրեն պէս մէկէ մը ասկէ զատ ուրիշ ծառայութիւն ալ չէր կրնար սպասել...

Արդարութեան պարտք մըն է այս առթիւ մեր հրապարակային շնորհակալութիւնը յայտնել առ Տիար Բժիթ Տրակուլէֆ, որ փաստաբանական ճարտար կորովով պաշտպանեց մեր դատը և յաղթանակը ապահովեց: Նոյնպէս շնորհակալութիւն առ Տիար Յակոբ Հաճի Կարապետեան որ իբրեւ վկայ իր տեսածը պատմեց ճշգրտօրէն և զնահատելի ծառայութիւն մը մատուց արդարութեան:

ՊԱՐԾԿԱՀԱՅՔ

Պարսկահայոց մէջ սուղ վիճակ առած խընդիր մը նոր Զոհրայի Հայ աղջիկներու խնդիրն է: Այդ հայաբնակ քաղաքին երիտասարդները, ուսում առնելէ և մանաւանդ անգլիերէն սովորելէ ետքը, գործի ընդարձակ ասպարէզ ունենալու համար Հնդկաստան կը գաղթեն վաղուց ի բայց վերջերս այս գաղթում այնքան աւելց է որ նոր Զոհրայի մէջ Հայոց նոր սերունդէն աղջիկները միայն մնացած են իրենց ծնողաց հետ: Գաղթող երիտասարդները կամ Հնդկաստանի մէջ կամուսնանան և կամ ամուրի կեանք կը վարեն հոն: Հարիւրաւոր հայ աղջիկներ այսպէս ամուրիութեան դատապարտուեր են նոր Զոհրայի մէջ, թերթի բուն նամակներ կը դրուին որ Պարսկաստանի ուրիշ կողմերէն և Կովկասէն կարգուիլ ուղող երիտասարդներ շատ լաւ ընտրութիւն կըրնան ընել նոր Զոհրայի մէջ, ուր Հայ աղջիկներն առ հասարակ դիտեն կարգաւ գրել, անպատճառ ձեռագործ արհեստ մ'ունին և քաջամարտ են տանախնդրութեան: Յանձն կառնեն իրենց այրերուն հետ իրենք և ոգաղթել, բայց իբրեւ միակ

պայման կը խնդրեն որ փեսացուն ծանօթ մէկը
ըլլայ կամ իր պատուաւորութեան և ամուրիու-
թեան գէթ մէկ վկայ յանձնայ Նոր Զուգայի մէջ:
Բիւզաղիոն

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՈՒՉՈՎԱԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Սուչովայի մէջ կան երկու եկեղեցիներ, Ս.
Խաչ և Ս. Սիմէոն անուն և իրարմէ հինգ վայր-
կեան հեռաւորութեամբ: Ի՞նչ և մէկ քանի տաս-
նեակ տարիներ առաջ այս երկու եկեղեցիներ-
ուն մէջ ալ ամեն օր ժամատացութիւն կըլլայ
եղեր, բայց հիմա Սուչովայի հայոց ամենօրեայ
ժամատացութեան յատկացումը եկեղեցին Ս.
Խաչի եկեղեցին է, իսկ Ս. Սիմէոն եկեղեցին
մէջ Տեառնընդառաջին և տաղաւարներու Պռե-
յոցի օրեր ժամատացութիւն կըլլայ: Նաեւ ննջե-
ցեալներու հոգոյ համար յատուկ պատարագնե-
րը այս վերջնոյն մէջ տեղի կունենան, որովհե-
տեւ Սուչովացոց հին դերեզմանատունը նոյն ե-
կեղեցին ըսկին մէջ կը գտնուի: Ս. Սիմէոն ե-
կեղեցին ըստ Սուչովացոց աւանդութեան 1600ին
շինուած է: Իսկ Ս. Խաչ եկեղեցին շինուած է
եղեր 1521ին, արդեամբ Խաչիկ Հանգոյեանի:
Սուչովացոց այդ աւանդութիւնը հաստատող մի-
ակ ապացոյցը տաճարի, հարաւային պատին մէջ
գետեղուած քար մըն է, որուն վրայ (թվին 24.)
գրուած է, Այս եկեղեցին մէջ Ս. Խաչի տօնը
մեծ հանդիսաւորութեամբ կը կատարուի և գիւ-
ղերը գտնուող Հայերէն շատերը ներկայ կըլլան
առաւօտեան ժամատացութեանց, բայց մանա-
ւանդ երեկոյեան Խաչվերացի հանդէսին, որ մեծ
չքով կը կատարուի, և նոյն իսկ թափօրի ժամա-
նակ ամպհովանի ալ կը պտտցուի: Ամպհովանիի
գործածութեան սկզբնաւորութեան թուականը
հասկնալ ինձ անհնար եղաւ, բայց անշուշտ նո-
րամուտ ըլլալու է:

Անցորդ

ԲՆՈՒՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Դափնի. — Հին ատեն տաղանդները գիտե-
ին անոր յարգը, հիմայ... թրածուկին աղան-
դերը (մէզէ):

Նշանտուր. — Ամուսնութեան նախատո-
նակը:

Հով. — Բնութեան շնորհը՝ ամառը տաքուն,
կնութեան շնորհը՝ իր վրայ թաքուն:

Կաշառք. — Եկուր որ օրօր ըսեմ քեզի, իմ
աղուորիկ խղճմամբս:

Ժառանգորդ. — Ժառանգութեան որդի:

Կոյն. — Նկարիչը կը քէ երբ ունի, իսկ
կինը կը քսուի երբ չունի:

Ժպտ. — Դէմքին սիրուն փաթը, զոր կեղ-
ծիքը ներսէն կը շինէ:

Դրամ. — Այն օրէն որ մարդ տեսաւ թէ
այս բառը իր գլխի վրայն է, գլխի վեր բռնել
սկսաւ:

Կուրծք. — Իր հարստութեանը ամբողջ գաղտ-
նիքը սեղմիրանին հարցաւ:

Լպտեւ. — Աստուծոյ պաշտօնէին աղօթքի
վայելուչ ընթերցումը... ան լուրի յուրօրկաւո-
րութեան:

ԹՕՎՈ

Հանելուկ թիւ 1

Ոտքեր չունիմ՝ ման կուգամ,

Արիւն ու ջուր կուլ կուտամ:

Առանց կերածս մարսելու՝

Կտրիպեն զիս փրօխելու:

Արշաւրաճագ

Ա. լուծողին նուէրն է ոտանաւորի գրքոյկ մը:

ԶԲՕՍԱՆՔ



Գիւղացի աղջիկը հորին գլուխը իր կօշիկին
մէկը կորսնցուցեր է, ուր կրնայ գտնել:

ՉԻՆԱՑԻ ԿԻՆԸ

Չինու մէջ կինը իր էրկանը իշխանութեան ենթարկուած է բոլորովին: Բարձր դասակարգերու մէջ, ասկէ առաջ, առանց իրենց ամուսինն արտօնութեան, կիները չէին կրնար դուրս ելլել, և ամրապէս գոցուած գահաւորակի մը մէջ միայն կրնային նստիլ: Բայց այսօր երեսնին բաց գահաւորակ կը նստին և նոյն իսկ եւրոպացի կնոջ մը կեանքը կը վարեն կարգ մը բաներու մէջ: Բայց միջին դասակարգերու մէջ կինը ընտանեկան շրջանակէն դուրս չելլէր տակաւին և առտնին գործերով կը զբաղի: Եթէ երբեք մէկ կամ մէկ քանի զաւակներու մայր ըլլայ, այն տեն իրական հեղինակութիւն մը կը ստանայ, որ ճշմարիտ արժանապատուութեան մը կը փոխուի, մանաւանդ երբ իր զաւակները ամուսնացած ըլլան:

Ծնողքները յաճախ օրօրոյէն կը նշանեն իրենց տղաքը, ինչպէս մեր գաւառացիները կ'ընեն (պէշիք քէրթմէ): Ամուսնանալու ատենը եկածին պէս, կարգ մը ձեւակերպութիւններ կը կատարուին: Եթէ աստեղագիտական բոլոր նշանները նպաստաւոր են, մանչու հայրն ու եղբայրը պատգամաւոր մը կը զրկեն աղջկան ծննդքին: Ըստ օրինի ամուսնութեան խնդրելու համար աղջիկը: Տրուած պատասխանը երբ նըպաստաւոր ըլլայ, մանչուն ծնողքը գրաւոր խոստում մը կը պահանջէ: Այս պայմանագրութիւնը կնքուելէն յետոյ, մանչուն կողմէ նուէրներ կը զրկուի աղջկան ընտանիքին: Օրացոյցը նախօրէի ամուսնութեան օրը կ'որոշեն: Ամուսնութեան հանդէսը երկար արարողութիւններէ կը բաղկանայ, զոր կը խոտանանք առաջիկային նկարագրել:

Բազմակնութիւնը թոյլատրուած է, բայց մէկ կինը միայն օրինաւոր կը ճանչցուի և անկա միշտ գերակշիռ դիրք մը ունի միւսներուն վրայ: Ինքն է որ կը կառավարէ տունը և ճշմարիտ տանտիրուհին կը համարուի: Եթէ ամուսինը տիտղոս մը, աստիճան մը ունի կամ գիրք մը կը գրաւէ ընկերային ու դիմուորական նախարարութեանց մէջ, օրինաւոր կինն է միայն որ կը մասնակցի ամուսնին ընծայուած պատիւներուն: Եթէ նոյն իսկ ամենէն առաջ մեռնի, միւս կիները իրենց ստորուկ վիճակէն չեն կրնար ազատիլ:

Ամուսնալուծում կատարելը շատ դիւրին է և ամէն ոք կ'օգտուի այդ թոյլտուութենէն: Չինական օրէնքը եթէ օրինաւոր պատճառ կ'ընդունի ամուսնալուծութեան համար, որոնք են, կնոջ ամուսնութիւնը, յոռի ընթացք, յարստեղ

նախանձը, չափաւորաց չառախօսութիւնը, գողութիւնը, անհնազանդութիւնը, բորոտութիւնը:

Չինացի կիներու, մանկութենէ սկսեալ, իրենց ստրկերը կաշկանդելով ձեւեղծելու ծագրելի սովորութիւնը մեծ ազդեցութիւն կ'ընէ իրենց ապրելու եղանակին վրայ: Չինու հարաւային նահանգները բնակող բարձր դասու կիներու մէջ կանոնի կարգ անցած ու սովորութիւն մը դարձած է: Հիւսիսային մասին, մանաւանդ Բէքինի մէջ կը յաւելն այդ սովորութիւնը իսկ թաթարներուն մէջ արգելուած է:

Ոտքերու ձեւեղծումը երկու եղանակով կը կատարուի: Առաջինին մէջ ոտնամատերը ոտքին տակ կը կընն բաց ի բթամատէն, որ դուրս կը մնայ, գարշապարին երեսը գոգաձե կը դառնայ, ու ընտելին ուղղութիւնը կը փոխուի ու իր հօրի-զնական ձեւէն ուղղահայեաց կը դառնայ: Ատիկա ամենէն ծայրագոյն աստիճանն է: Երբեմն ալ չորս ոտնամատերը ոտքին տակ ծռելով կը դահան, առանց փոխելու ուղնուկին ուղղութիւնը: Չորս, վեց կամ եօթը տարեկանին մէջ կը սկսին այդ գործօղութիւնները: Հաթէ պատաններով կը մարձեն և կը ճնշեն ստքը և այդպէս փափաքուած արգիւնքը ձեռք կը ձգեն: Իսկ խեղճ կինը այդ կամաւոր կաշուեան ենթարկուած, չի կրնար քալել և ստիպուած է նստողական կեանք մը անցնելու, որով տան գործերը երեսի վրայ կը թողուին:

Քաղաքներու մէջ կիները գրեթէ աշխատութիւն չունին: Առուտուրով զբաղող կիները անշարժ կը կենան իրենց հաշուեօրէններուն առջեւ: Ընկերութեան միւս բոլոր դասակարգերուն մէջ այրերը կը կատարեն առտնին աշխատութեանց մեծ մասը, կերակուր կեփեն և տան մանր մունր գործերը կը տեսնեն: Մաքրութիւնը ամենէն անտեսուած բանն է չինական բնակարաններուն մէջ, աշտոտութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասած է:

Չինու մէջ կինը փողոցի նուագածու և երգչուհի ալ կ'ըլլան, որոնք խիբլին կը պոռնին իրենց տղոց ընկերացած:


Գիւղերու մէջ կնոջ վիճակը աւելի դժնդակ է, որովհետեւ դաշտային ծանր աշխատութեանց ենթարկուած է: Կան զիւղեր ուր կիները բամպակ հիւսելով կամ արուետտայան ծաղկեղնութեամբ կ'զբաղին: Այս զերշին ճարտարութեամբ շատ տարածուած է, որովհետեւ ծաղիկը Չինու մէջ ամենէն աւելի յարգի վարդարանքներէն մէկն է: Գիւղուկ ինչպէս նաև բարձր միջին դասու կիները իրենց մաշերուն մէջ ծաղիկ կը գնեն: Կիներուն հագուստները բաւական միօրինակ են:

Ընդհանրապէս պատմութեան մը և կարճ ու լայն թեղանիքներով միտաբան վերարկուններ կը հագնին, որոնց օձիքը աղեղնաձև կտրուած է, կուրծքը լայն ու խիստ վայելուչ ասեղնադործութիւններով զարդարուած: Այն կիները որոնք իրենց ոտքերը կը պղտիկցնեն, շատ կարճ կօշիկներ կը հագնին: Գլխու զարդարանքը աւելի փոփոխական է քան հագուստը. նահանգէ նահանգ կը փոխուի: Ընդհանրապէս կիները վարսակալ մը կը կրեն. ամենէն հարուստները ոսկիէ դնդասեղերով կ'ամփոփեն իրենց մազերը. աղքատները պղնձէ գլխազարդերով կը գոհանան: Երբեմն մետաղէ փոքր վարսակալներ կը գործածեն կամ թէ ընական ու արուեստական ծաղիկներով ու թիթեռնիկի կապոյտ թևերով կը զարդարեն զգլուխին: Չինացի կիները կը սիրեն ալլաղան դոհարներով պնտիլ, ինչպէս ապարան շան, մատնի, օղ, մանեակ: Եղունգնին երկար ձգելու սովորութեանը պատճառաւ, ոսկիէ և արծաթէ մատնապահեր կը գործածեն, իսկ անոնք որ երկար եղունգ չունին, յաճախ իբր զարդ մատնապահեր կը գործածեն:

Հովանոցն ու հոգմահարը անհրաժեշտ առարկաներ են չինացի կնոջ մը արդուզարդին համար: Ձմեռը ականջի պահարաններ կը գնեն, որոնք սիրուն կերպով ասեղնադործուած են արտաքուստ, իսկ ներսը ծածկուած է մաշկեակով: Երբ ձմեռը չափազանց ցուրտ ընէ, ականջները այդ պահպանակին մէջ կանցնեն:

Մեծ թուով կիներ ափիսն կը ծխեն, այդ մոլորութիւնը հետզհետէ մեծ աւեր կը գործէ. անոր հետեանքով շատ մը մայրեր անկարող են իրենց զաւակները դիեցնելու: Վերջապէս չինացի կիներ մօտէն տեսնող և ուսումնասիրող եւրոպացի ճամբարդները սա եղբակացութեան կը յանգին թէ չինացի կիներ իտեալ կին մը չէ, քանի որ բնաւ հոգ չի տան իր առտնին գործերու, մաքրութեան և քրքէք չի խորհիր ընտանեկան հարկը հրապուրիչ դարձնելու համար:

ՆՈՒՁԱ



Խորամանկ կծծիին մէկը իր կնոջ հիւանդութեանը վրայ վստահութիւն չունենալով, բժշկի մը հետ սակարկութեան կը մտնէ:

—Տօքթօր, կնոջս հիւանդութիւնը դարմանելու գործը ձեզ կը յանձնեմ. ու պայմանաւոր կանխիկ վճարում չպիտի ընեմ, այլ վերջէն

պիտի վճարեմ ձեր ամբողջ շիզիքաները, կինս աղէկցնէք ալ մեռցնէք ալ:

Տօքթօրը կընդունի այս պայմանը, բայց ի շուր ամէն ջանք ի գործ կը դնէ ազատելու համար կինը որ վերջապէս կը մեռնի: Քիչ յետոյ բժիշկը ամուսնոյն ներկայանալով այցելադիւնները կը խնդրէ:

—Ի՞նչ, տօքթօր, դրամ կը պահանջէք ինձմէ:

—Անտարախոյս, վիզիթաներս, ըստ ձեր խոստման:

—Բայց կինս աղէկցուցի՞ք:

—Դժժբաղդաբար պարոն, բոլոր ջանքերս ի դերե ելան:

—Միթէ մեռցուցի՞ք:

—...

Բժիշկը ի՞նչպէս կրնար այդ հարցման հաստատական պատասխան տալ:

—Հետեւաբար, սիրելի տօքթօր, մեր պայմանագրութեան համեմատ քանի որ կինս ոչ աղէկցուցիք և ոչ ալ մեռցուցիք, ինձմէ պահանջ մը չունիք ուրեմն:

Վարժարանի մը մէջ հայերէն լեզուի ուղղագրութեան քննութիւնը կը կատարուէր:

Քննիչը. —Անուշիդ ի՞նչ է, տղաս:

—Ներսէս:

—Ներսէս անանկ կուգայ որ դուն ուղղագրութիւն լաւ գիտես: Ըսէ տեսնեմ, «խելօք» բառը «խոլ» կը կապուի չէ նէ մի «չոլ»:

—«Խոլ»:

—Շատ լաւ. յիմարը ինչո՞վ կը կապուի:

—... զինձիով:

(Ընդհանուր ծիծաղ)

Եկեղեցւոյ մէջ:

Քահանան կը հարցնէ. —Երախայս զի՞նչ խնդրէ:

Կնքահայրը 10 տարեկան, կը մոռնայ տալիք պատասխանը, որովհետեւ նոյն միջոցին մանուկը գրկին մէջ սուր ճիչեր արձակելուն, զարմացած անոր կը նայի:

Քահանան կը կրկնէ. —Երախայս զի՞նչ խնդրէ. Փոքրիկ կնքահայրը շփոթած —Մայրիկին ծիծը:

Անգամ մը Սբայի մէջ (Պէլժիա) ձիարչաւ մը տեղի կունենար, ուր ներկայ կը գտնուէր նաեւ Պելժիոյ թագաւորը, Լէսթրո Բ. իրեն յատկացիալ ամպրոնին մէջ նստած:

Անգլիացի այր ու կին մը, թէթեի մտած պատահմամբ հոնկէ անցած պահուն, կինը նըշմարելով թագաւորը, հետաքրքրութեամբ ամուսնոյն կը հարցնէ:

— Յիրելիս, կարծեմ Պելժիոյ թագաւորն է ատիկայ:

Ամուսինը, վստահ ըլլալու համար, կը կենայ, ու գրպանէն Պելժիոյ դրամներէն հատ մը կը հանէ, որուն վրայ թագաւորին գէմքին պատկերը կայ: Մէկ քանի անգամներ մէջ մը դրամին վրայ, մէջ մըն ալ թագաւորին երեսը նայելէ վերջ, կնոջը դառնալով վստահ շեշտով մը կըսէ:

— Օհ, այո՛ սիրելիս, նոյն ինքն է:

Ու ճամբանին կը շարունակեն:

Թագաւորը, որ զիրենք կը դիտէր, Անգլիացիին վճռական պատասխանը լսելով կը խնդայ լիթին տակէն:

— Օհ, սա պաշարին անգլիացիները:

Աշխարհի ամէն կողմը քսակահատներ կը գտնուին, բայց Լոնտոնցիները կը գերազանցեն ամէնքն ալ: Կըսուի նոյն իսկ թէ Լոնտոնի մէջ այդ արհեստին համար յատուկ գաղտնի դպրոց մը կայ ուր ամէն տղգէ աշակերտներ կ'ընդունուին:

Վերջերս Վիէննայի ժողովրդեան մէջ զրոյց մը կար թէ Լոնտոնի յիշեալ վարժարանէն վերկայեալ խիստ վարպետ քսակահատ մը հոն կը գործէ այժմ, և իր ճարպիկութեամբ բաւական ընտիր զոհեր ըրեր է: Ոչ ոք կը ճանչնար զինքը:

Բան գործ չունեցող պարծենկոտ երիտասարդ կալուածատէր մը ուզեց խաղ մը խաղալ այդ համբաւաւոր ու անտեսանելի քսակահատին, և այս նպատակով առաւօտ մը խիստ շքեղ կերպով հագուելով դուրս ելաւ: Վերարկուն շէր կոճկած, այնպէս որ ըսկոնը կը տեսնուէր, ուրուն աչք պահին մէջ, մէկ ծայրը դուրսէն տեսանելի կերպով, դրած էր քօռք-նօնէ մը կատարելապէս պարապ, միայն թէ մէջը թուղթ մը դրած էր վրան չորս լեզուով հետևեալը գրուած:

— «Օխ, խաբէցի քեզի որդի սատանի»:

Առտունէ մընչեւ իրիկուն ի զուր կը պըտըտէր Վիէննայի բազմամարդ փողոցները: Ի տես զնեղով իր անձը . . . և բաճկոնը: Վերջա-

պէս բան մը չտեսաւ ու չզգաց: Յուսահատ, որոշեց տուն գառնալ, ուրիշ օրուն թողլով վերստին փորձել: Հետաքրքրութեամբ բռնած նէն բացաւ ու տեսաւ որ իր դրած թուղթը կը կենար մէջը, բայց ապշութեամբ նշմարեց օտար գիր մըն ալ իր դրածին տակ:

«Օխ, խաբէցի քեզի որդի սատանի» խօսքին ստորեւ գրուած էր:

— «Կը ծիծաղիս վրաս, խախա Լազարի:

— ? . . .

ՏԵՆԵՂԻՐ

Ս. ժամն Բոժոժիկ եւ Ընկ.

Քամչաթքա

Տիեզերաբառաստ յօդուածագիրն միւսիւ Կալկիտաք՝ իր նոր ուղիին մէջ սկսաւ յառաջանալ: Ինքզինքը թատրոնապետութեան տուաւ: 20 փարա անքուով գպրոցական տղաքներ զլուխը կը ժողուէ . . . տանը մէջ և իր ռէվերանսական հիւնալի շարժումներովը ներկայացուցներ կուտայ:

Բոժ. — Աստուած շատ քաջել չի տայ:

Անդին

Հոս ալ կարող գերատանուհիի պէտքը զգալի ըլլալուն, որոշուեցաւ առ այժմ տիկին Արուսեակ Պէզիրճեանի և Պայծառ Փասուլեանի հետ բանակցութեան մտնել:

Դերատանական խումբս պատրաստ է կանխավճար մը ընել Տ. Գալէմճեանի, եթէ սակայն կէս ճամբէն ետ չի գառնալու համար երաշխաւոր մը ցոյց տրուի:

Կէս գիշեր

Տայը Միրիկին Ֆասուլեանի գէմ բացած պատուոյ դատը յետաձգուեցաւ, մինչև ի գալուստն յեղիպտոսէ տիկին Հոռոփ Միրիկեանի:

Դանուբի եզերք

Մերերկսեռ ոսույշական մարմինը այս միջոցիս ոարտափելի տեսակէն ճոռնալուքով մէջ է. ոտել խմել, պուշալ, կանչել, երգել, նուագել, հրճուիլ, ժպտիլ, խաղալ խնդալ ամենայն ինչ կատարեալ է: (Տէրայի քաւ Բօսթ):

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (34)

ՌԻՆԷ ՏՐԻՓՆԻ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԺԱՐԻՍ-ՄԱՐԺԱՐԻՍ)

Քանի մը վայրկեան անշարժ ու մտախոհ մնաց, անսահմանութեան վրայ սաւառնող չար հրեշտակի մը հանդոյն. յետոյ յանկարծ, կարծես մոլեղին ցնորանքի մը ենթակայ, բաշտէն երկարեց գոչելով.

— Այս պահուս Բէյ—Հօ ի Հոնկ—Քոնկ. քանի մը օրէն Սօլ—Պրոտէ ի Քանդոն: Վաղը ամենալօր պիտի ըլլամ. վերջապէս շատ չանցած վրիժառութիւնո կատարեալ պիտի ըլլայ:

b.

Ուր մեծարոյ նախագահ Մեմկ յաջորդաբար կը զարհուրի, կ'ապշի եւ կը յախշակուի

Քիչ առաջ այն ատենէն ուր տեղի կունենայ մեր վեպը, թէեւ Անգլիա դեռ քանի մը տարիներէ ի վեր միայն պաշտօնապէս տէր եղած էր ափ մը հողին ի Զինաստան, իր գաղթականութիւնը արդէն ծաղկած էր եւ Ծայրագոյն Արեւելքի էն հարուստ առեւտրական տունն ունէր:

Վիթթորիա, զոր ուղեւորները և նոյն իսկ կարգ մը աշխարհագետներ կը յամառին Հոնկ—Քոնկ կոչել, համանուն կղզիին վրայ հաստատուած ըլլալուն, կարեւոր բաղաբ մըն էր, որ անգամ մը եւս կը յայտնէր անգլիացիներուն գաղթային հանձարը:

Պէտք է ըսել որ գծուար պիտի ըլլար աւելի նըպաստաւոր տեղ մը ընտրել քան այն տեղը զոր անգլիացիները ձեռք անցուցած են Զինաստանի մէջ բըռնութեամբ կամ դիւանագիտութեամբ,

Ըստ երեւոյթին՝ ցամաք հողի մը վրայ հրաշքներ գործած են. Քանի մը քիլոմէթր շրջապատով այդ փոքր կղզիին հովիտներուն մէջ՝ բրինձի կանանչաւետ դաշտեր կան միայն որք երկրին լաւագոյն բրինձը կարտադրեն, եւ գետեզրին բոլոր երկայնութեամբ շքեղ ամարանոցներ կը նշմարուին որք ծովածոցին վրայ դիւթական երեւոյթ մը ունին և զորս ծովուն բամին կը զովացունեն իր շնչովը:

Անգլիան հինգ հազար մըն հեռու՝ աղնուապետական մէկ գաւառն է Տըվէնշայրի.

Եթէ չըլլային խեղճ ձկնորսներն ու տեղացի բանի մը պաշտօնեաներ, սրոց գահաւորակները կը հանդիպին ամենէն վայելուչ կոթերուն, Հոնկ—Քոնկ աւելի Հուայթ կղզիին պիտի նմանէր:

Նոյն հանգստաւետ, պերճաշուք կեանքը. Մեծագին ձիերու նոյն պերճանքը. Նոյն կենցաղը բլիւպնրու, այսինքն նոյն ձիարչաները, նոյն գրաւները:

Քանդոնի եւրոպացի հարուստ վաճառականները գրեթէ ամենքն ալ Հոնկ—Քոնկի մէջ ամարանոցներ ունին, որք շատ անգամ ապաստանարաններ կըլլան իրենց, երբ Զինական իշխանութիւնները սիրով չվարուին հետերին:

Բնականաբար Բերքինս ալ, իր բարեկամներուն մեծագոյն մասին պէս, որուն առանձնարան մը ունէր, ուր կը սիրէր քանի մը օր հանգստանալ, իր ամեն մէկ վտանգաւոր ուղեւորութիւններէն ետքը:

Հոն հրաւիրած էր եղբունդատ ատենին նախագահը՝ իր սեղանին մասնակցելու. Մեծարոյ նախագահը, հակառակ առջի գիշերսւան իր յուզումներուն ու ձախուղածներուն, փութացած էր այս ժամադրութեան.

Նախ կուգէր Լէնկի սպանչին անունը զրուել մաքսախոյոյն, եւ յետոյ տնհամբեր էր գիտնալու թէ Բերքինս ինչո՞ւ գնած էր կախաղանը հանուելիք մարգ մը:

Ուստի ցորեկը Հոնկ Քոնկ հասած էր, ծովահեններուն կախմանէ որոշուած ժամէն շատ ետքը. Սակայն նաւապետն իր ամարանոցը գտած չէր: Անիկա կանուխ դուրս ելած էր եւ շատ ուշ տուն պիտի դառնար, բայց զանց չէր առած հարկ եղած հրահանգները տալու իր ծառաններուն:

Արդ՝ Մէնկ ընդունուած էր պարտապատշաճ պատիւներով, եւ որովհետեւ Բերքինս խոհարար մը ունէր զոր շափաղանց կը յարգէր մանտարէնը, իր առաջին հոգն եղաւ կաղղուրիլ հիւթեղ նախաճաշով մը:

Այն ատեն իր սեւ մտածումներէն ազատած, պառկեցաւ երկար աթոռի մը վրայ, իւր արդիւն ծխափայտը քաշելով համբերութեամբ սպասելու. համար որ իր հիւրընկալն ետ դառնայ, եւ ալ առանց փոյթ ընելու գուրսն անցած գարձածը:

Սակայն Վիթթորիա առտուրնէ ի վեր թատերաւալուն էր յոյժ հետաքրքրաշարժ տեսարանի մը, վասն զի չմոռնալով որ այդ օրը պիտի կախուէին մահապարտ ծովահենները, ժողովուրդը՝ արեւը ելլելուն պէս՝ խու-

ժամ էր մահու պատիժներուն յատկացուած տեղը, ան-
ձուկ պարապ գետին մը, գերեզմանոցին մօտ, քաղա-
քին հիւսիսակողմը:

Զարմանքն ընդհանուր եղաւ երբ նշմարեցին թէ
կախաղանները դեռ գետինը ինկած էին խառն ի խու-
ռըն, եւ բնաւ կարգադրութիւն մը եղած չէր երեւար
մահաշուք արարողութեան համար:

Շուտով հասկցան թէ որոշուած ժամուն չէր կըր-
նար տեղի ունենալ, եւ քանի մը անհամբերներ ար-
դէն դժգոհութիւն կը յայտնէին, երբ ոստիկաններն
իմացուցին թէ մէկ քանի ժամ միայն ուշ պիտի մնար
արարողութիւնը, և թէ այս յապաղման պատճառը
պարզապէս սա էր որ դահիճը պարտաւորուած էր իր
օգնականներովն ու շինուածանիւթովը քանդոնէն Հոնկ-
ֆոնկ փոխադրուիլ: Աւելցուցին թէ գործողութիւնը
անպատճառ ժամը եօթնին տեղի պիտի ունենար:

Այս տեղեկութենէն գոհանալով, բաղմունքիւնը
հանդարտութեն հետեցաւ: Կանգիտանար ինչ որ Մէնկ
եւս չէր գիտեր, այսինքն երկրորդ այցելութիւնը գոր-
բերքինս տուած էր Ռուսիին՝ յաջորդ օրն այն գիշեր-
ուան ուր դահիճին ներկայացուցած էր զինքը: Արդ,
երկրորդ այցելութեան մէջ ահա թէ ինչ պայմանա-
րուած էր նաւապետին ու դահիճին միջև, ուր քսակի
մը շնորհովն անշուշտ:

Ռուսի խոստացած էր որ փոխադրուի արեւմտեղին
Հոնկ—ֆոնկ գտնուելու: Ինչպէս հրաման ընդունած
էր, վասն զի մահու պատիժը կէս օրին հրամայուած
էր, աշխատութեանց զազարի ժամուն, որպէս զի նա-
ւաստիներն ու գործաւորները կարենան ներկայ գլու-
նուիլ, անանկ մը պիտի ընէր որ ճիշդ ժամուն չգլու-
նուի, որպէս զի հարկ ըլլայ դատապարտեալներուն
պատժուը յետաձգել մինչեւ իրիկուան հանգիստի
ժամը, և խօսքը բռնած էր, արդիւնքը, ինչ ալ ըլլայ,
աչք առնելով:

Մասնաւոր էր որ արդէն ընդունած գրամը եւ ի-
րեն խոստացուած գումարը անշուշտ կարժէին պամպուի
քանի մը հարուածներ որոցմէ կը յուսար սակայն զերծ
մնայ՝ շնորհիւ իր մեզսակիցներուն պաշտպանութեանը:

Այս միջոցին, բերքինս նաւապետը սըր Արթուր
Միրրէյի և Տոբթոր Բլիթթընի հետ առաջ կը տանէր
այն խորհրդաւոր դործը, որուն օժանդակ եղած էր նա-
խագահի, առանց բան մը հասկնալու:

Առջի իրիկունը, մաքսախօսն ու իր երկու բարե-
կամները օրինաւոր արտօնապիւր մը ի ձեռքին, ներկայա-
ցած էին Վիթթորիաի բանտին տնօրէնին, և անմիջապէս
մտած էին Բէյ-Հոնկ քով, որ, ինչպէս իր ընկերները,

իր վերջին ժամուն կը պատկերէին կեանքի այն արհամարհան-
քով զոր կը դաւանին ամեն Չինացիներ, որ պատկար-
գին ալ պատկանին:

Ծովահէններուն պետը պատուած էին մասնաւոր
խուցով մը, ուր իրմէ օգտակար յայտնութիւն մը ըս-
տանալու յուսով զինքն յանձնած էին խելացի բանտա-
պանի մը, հետն աղէկ վարուելու հրամանով:

(Շար.)

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՔ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլաիւրիւճիւ ֆարալար վէ Հիքեայէլէր. Մալիւմա-
թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի Էյլէնճէլէր
վէ Բէսիմի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշը օլուէնան մէզքիւր քիթապըն պիւրինճի ճիւ-
տի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-
թըլմադաա տըր. Ֆիյ 2 ֆրանք:

Նոր հրատարակութիւն

Յ. Կ. ՊՈՆՃՈՒԿԵԱՆ

Պատկերազարդ նոր Ընթերցարան
Ա. տա. ի. Բ. տպագրութիւն, բարեփոխուած
Գին 70 սանդիւմ. Դիմել Մ. Գալապօճեանի
Վառնա

Հետեւեալ գիրքերը մեր խմբադրատան մէջ
կը ձախուին:

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բաւարան
գին 25 ֆր. ոսկեգրամ. Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինուրան — Տեազկան և դորմնական
Քերականութիւն Պուլկարեւոյն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ոսկէ ֆր.

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.
Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1
արար 50 սնդ.

Մահուպիյէթին միւքեաֆաթը, գօմէտի պիւր
բէրտէ, 50 սնդ.

Դագանճ գօճա եախօտ Էնֆիյէճի, գօմէտի պիւր
բէրտէ. 50 սնդ.

Печатница „аВзимность“ — Варна.